

# ՍԱՂՄՈՍ 31

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Տրտունջի և փառաբանության սաղմոս	ՏԵՐԸ ներդրության ժամանակ ամբոց	Անձնական թշնամիներից փրկության աղոթք	Աստծուն վատահոյության աղոթք	Աղոթք փորձության ժամանակ
<u>MT ներածություն</u> Գլխավոր երաժշտին, Դավթի սաղմոսը				
31:1-5	31:1-2  31:3-5	31:1-2  31:3-5	31:1-2  31:3-5	31:1-2ա  31:2բ-3  31:4-5բ 31:5գ-7ա
31:6-8	31:6-8	31:6-8	31:6-8	31:7բ-8
31:9-13	31:9-13	31:9-10  31:11-13	31:9-10  31:11-13	31:9  31:10 31:11 31:11գ-12 31:13
31:14-18	31:14-18	31:14-18	31:14-18	31:14-16 31:17-18
31:19-22	31:19-20  31:21-22	31:19-20  31:21-22	31:19-20  31:21-22	31:19  31:20 31:21-22
31:23-24	31:23-24	31:23-24	31:23-24	31:23-24

**ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ** («Մուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց») *ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ*

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Մուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն և այլն

## ՀԱՄԱՏԵՔՍԱՑՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Գոյություն ունեն այնքան շատ Սաղմոսներ, որտեղ հեղինակը իր թշնամիների դեմ Աստծուց օգնություն է փնտրում:

Հետաքրքիր է՝

1. Ովքե՞ր են այս թշնամիները:
2. Ինչո՞ւ է սաղմոսերգուն այսքան հաճախ իրեն մեկուսացած զգում:
3. Արդյո՞ք այս բոլոր սաղմոսները գրվել են սաղմոսերգուի կյանքի միևնույն շրջանում (հավանաբար Դավթի):

Բ. Սաղմոսերգուն բախվում է մի քանի խնդիրների՝

1. անձնական մեղք և դրա մտավոր և ֆիզիկական հետևանքները (տես՝ Սաղմ. 31:1-12)
2. անձնական հարձակումներ՝
  - ա. թշնամիների կողմից
  - բ. հարևանների կողմից
  - գ. ծանոթների կողմից

Գ. Թշնամիների գործողություններին առանձնահատուկ են՝

1. փորձում էին որոգայթի միջոցով նրան զցել ցանցը, Սաղմ. 31:4
2. փորձում էին նրան կուռքերին ապավինել, Սաղմ. 31:6
3. զրպարտում էին նրան, Սաղմ. 31:11, 13, 20
4. նրա դեմ խորհուրդ էին անում, Սաղմ. 31:13, 20
5. հալածում էին, Սաղմ. 31:15
6. ունեին ստախոս շուրթեր, Սաղմ. 31:18
7. չարախոսում էին, Սաղմ. 31:18

Դ. Առաջին Գրքում Սաղմոսների մեծ մասը ունեն նմանօրինակ թեմաներ և բառեր: Հնարավոր է, որ սա արտացոլում է մի անհայտ խմբագրող կամ հավաքագրող խումբ: Սաղմոսների տարբեր գրքեր ունեն հստակ նպատակային կառուցվածք (տես՝ Սաղմոսների Ներածությունը), սակայն ժամանակակիցները վստահ չեն, թե ինչ է դա:

## ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

### NASB (ԹԱՐՄԵՅՎԱԾ) ՏԵՔՍ. ՍԱՂՄՈՍ 31:1-5

<sup>1</sup>Քեզ հուսացի, ո՛վ ՏԵՐ, թող հավիտյան ամոթով չմնամ,

Ազատի՛ր ինձ Քո արդարությամբ:

<sup>2</sup>Քո ականջն ինձ խոնարհեցրու, շտապի՛ր ինձ ազատելու:

Իմ ամուր վեճը եղիր, ինձ փրկելու համար՝ պաշտպանության տուն:

<sup>3</sup>Քանի որ իմ վեճը ու բերդը Դու ես,

Քո անվան համար առաջնորդի՛ր ինձ ու ուղղություն տո՛ւր:

<sup>4</sup>Հանի՛ր ինձ որոգայթից, որ ինձ համար գաղտնի լարել են,

Քանի որ իմ զորությունը Դու ես:

<sup>5</sup>Քո ձեռքն են հանձնում իմ հոգին:

**Դու ինձ փրկեցիր, ո՛վ ՏԵՐ, ճշմարտության Աստված:**

**31:1-5** Նկատե՛ք շատ անձնական մոտեցման կերպը, որով հեղինակը դիմում է ՅԱՀՎԵԻՆ: Նկատե՛ք անձնական ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ քանակը: Սուրբգրային հավատքը անձնական վստահություն է անձնական Աստծո վրա: Այն հենց սկզբից էլ օրենքի կմ նույնիսկ բարոյական կանոնների հետ կապ չունի, այլ անձնական հանդիպման փորձառություն է: Այն հանդիպումը փոխում է ամեն բան: Մնացած ամեն ինչը դրա հիման վրա է:

- ❖ Այս պարբերությունն ունի մի քանի աղոթքի խնդրանք՝
  1. Թող ամոթով չմնամ – BDB 101, KB 116, *Qal* ԸՂԶԱԿԱՆ. այս ամոթը կարող էր կապված լինել Դավթի մեղքի հետ (տես՝ Սաղմոս 32, 51) կամ իր հեղինակության կամ նպատակների վրա այլ հարձակումների հետ, տես՝ Սաղմ. 25:2-3,20, 31:1,17, 35:26, 69:6, 119:6,46,78,80: Ամոթը երբեմն նշանակում է ՅԱՀՎԵԻ կողմից բաց թողնված վիճակ (տես՝ NIDOTTE, հատոր՝ 1, էջ՝ 621-627):
  2. Ազատիր ինձ – BDB 812, KB 930, *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
  3. Քո ականջը ինձ խոնարհեցրո՛ւ – BDB 639, KB 692, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ Սաղմ. 17:6, 71:2, 86:1, 88:2, 102:2
  4. Փրկի՛ր ինձ – BDB 664, KB 717, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
  5. եղիր իմ Վեմը – BDB 224, KB 243, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
  6. Առաջնորդիր ինձ – BDB 634, KB 685, *Qal* ԱՆԿԱՏԱՐ
  7. Առաջնորդիր ինձ – BDB 624, KB 675, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ
  8. Հանի՛ր ինձ նրանց որոգայթից – BDB 422, KB 425, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐՆրա աղոթքի խնդրանքները հիմնված են՝
  1. հանձնել է իրեն ՅԱՀՎԵԻՆ, Սաղմ. 31:5
  2. ՅԱՀՎԵՆ փրկել է նրան, Սաղմ. 31:5 (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՓՐԿԱԳԻՆ, ՓՐԿԵԼ)
  3. ՅԱՀՎԵՆ նրա գորությունն է, Սաղմ. 31:4
  4. ՅԱՀՎԵՆ Աստծո ճշմարտությունն է՝ հավատարմությունը, Սաղմ. 31:5 (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԱՏԱԼ, ՎԱՏԱՀԵԼ, ՀԱՎԱՏՔ ԵՎ ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆ ՀԿՈՒՄ)

**31:1** «**ապաստարան/հուսացի**» Սա ակնարկում է հզոր թաքստոց՝ ապահովության և անցտանգության համար: Տես Սաղմ. 2:12-ի գրառումը:

❖ «**արդարություն**» Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ

**31:2** «**վեմ**» Տես Սաղմ. 18:2-ի գրառումը: Գոյություն ունեն երկու տարբեր երբայերեն բառեր, որոնք թարգմանվում են «վեմ»: Սաղմ. 31:2 – BDB 700, Սաղմ. 31:3-ում – BDB 849: Երկուսն էլ վերաբերում են կայունության, պաշտպանության և անվտանգության վայրի (տես՝ 2 Օր. 32:4, 15, 18, 30):

**31:3** «**բերդը**» Տես Սաղմ. 18:2-ի գրառումը:

❖ «**Քո անվան համար**» Տես Սաղմ. 23:3 և 25:11-ի գրառումները: Այն ներկայացնում է ՅԱՀՎԵԻ բնավորությունը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԻՍՐԱՅԵԼԻ ԱՍՏՈՆ ԲԱՆՎՈՐՈՒԹՅԱՆ ԳԾԵՐԸ

**31:3-4** Նկատե՛ք ԱՆԿԱՏԱՐՆԵՐԻ շարքը, որոնք խոսում են շարունակվող գործողությունների մասին:

1. առաջնորդում է – BDB 634, KB 685, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ
2. ուղղություն է տալիս – BDB 624, KB 675, *Piel* ԱՆԿԱՏԱՐ
3. հանում է ինձ – BDB 422, KB 425, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ

**31:4 «որոգայթ»** Սա որսորդության գործիք էր (BDB 440): Այն սկսել է փոխաբերորեն կիրառվել որպես մարդկանց վնասել կամ նվաճելու խոսք (տես՝ Սաղմ. 9:15, 10:9, 35:7-8, 57:6, 140:5):

**31:5 «Քո ձեռքն եմ հանձնում իմ հոգին»** Սա մեջբերվել է Հիսուսի կողմից՝ խաչի վրա, հենց Իր մահից առաջ (տես՝ Դուկ. 23:46):

Այս ԲԱՅԸ(BDB 823, KB 955, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ) ունի լայն իմաստային դաշտ: Այստեղ այն արտահայտում է շարունակական վստահություն: Այս վստահությունը հիմնված է Աստծո էության վրա (այսինքն՝ «ճշմարտության Աստվածը», «հավատարիմ Աստվածը»), և ոչ թե սաղմոսերգուի արժանիքները:

❖ «**Ձեռք**» Տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՁԵՌՔ

❖ «**հոգին**» Սա եբրայերենի *ruah* (BDB 924) բառն է: Այստեղ այն վերաբերում է կյանքի անտեսանելի ուժին, որը կապված է ՅԱՀՎԵԻ հետ, ով Ծննդ. 2:7-ով Ադամի ռունգերի մեջ կյանք փչեց: Երբ այն հեռանում է մարմնից, այդ մարմինը գնում է մեռյալների պահման վայրը (*Շեռ*):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՈՐՏԵՂ ԵՆ ՄԵՌԵԼՆԵՐԸ

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀՈԳԻՆ ԱՍՏՎԱԾԱՇՆՉՈՒՄ**

**SPECIAL TOPIC: SPIRIT IN THE BIBLE**

- I. Հին Կտակարան (*ruah*, BDB 924, KB 1197, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՇՈՒՆՉ, ՔԱՆԻ, ՀՈԳԻ /ՀԿ/)  
(*ruah*, BDB 924)  
Ա. Մոնոթեիստական Աստծո գործողությունները (այսինքն՝ Հոգին, որը կիրառված է ՀԿ-ում 90 անգամ)
  - 1. դրական, Ծննդոց 1:2
  - 2. բացասական, 1 Թագ. 16:14-16,23, 3 Թագ. 22:21-22, Եսայի 29:10Բ. Աստվածատուր կյանքի ուժը մարդկության մեջ (այսինքն՝ Աստծո շունչը, տես՝ Ծննդ. 2:7)  
գ. Մեպտուազինտան թարգմանում է *ruah* բառը *pneuma* (LXX-ում գործածվում է 100 անգամ)  
Դ. Ավելի ուշ ռաբբիական գրերում, ապոկալիպտիկ գրերում և Մեռյալ Ծովի Գալարներում, ազդեցություն կրելով Չրադաշտականությունից, *pneuma* կիրառվում է հրեշտակների և դևերի համար:
- II. Հունարեն տերմինները  
Ա. *pneō*, փչել  
Բ. *pnoē*, քամի, շունչ  
Գ. *pneuma*, հոգի, քամի  
Դ. *pneumatikos*, հոգու հետ առնչվող  
Ե. *pneumatikōs*, հոգևորապես
- III. Հունական փիլիսոփայական հիմքը (*pneuma*)  
Ա. Արիստոտելն օգտագործում էր այս տերմինը որպես կյանքի ուժ, որը զարգացնում է ծնունդից մինչև ինքնկրթություն:  
Բ. Ստոիկները գործածում էին այս տերմինը որպես *psuchē* (շունչ) և անգամ *nous* (միտք) բառերի հոմանիշ՝ ֆիզիկական հինգ զգայարանների և մարդու ինտելեկտի իմաստով:  
Գ. Հունարեն մտածելակերպում այս տերմինը դարձավ աստվածային գործողությանը համազոր (այսինքն՝ հմայություն, մագիա, օկուլտիզմ, մարգարեություն, և այլն):
- IV. Նոր Կտակարան (*pneuma*, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀՈԳԻՆ [pneuma] ՆԿ-ՈՒՄ)

Ա. Աստծո հատուկ ներկայությունը, գորությունը և սպառագինումը

Բ. Հոգին կապված է եկեղեցում Աստծո գործունեության հետ (հիմնականում Հովհաննեսի գրքում)

1. մարգարեություն
2. հրաշքներ
3. ավետարանը քարոզելու համարձակություն
4. իմաստություն (այսինքն՝ ավետարանը)
5. ուրախություն
6. բերում է նոր դարաշրջանը
7. դարձ (այսինքն՝ հետամուտ լինելը և ներբնակեցումը)
8. Քրիստոսանմանություն
9. ծառայության հատուկ պարզկները
10. աղոթում է հավատացյալների համար

Հոգին արթնացնում է մարդկության ցանկությունը Աստծո հետ փոխհարաբերվելու, որի համար էլ ստեղծված են: Այս փոխհարաբերությունը հնարավոր է Հիսուսի՝ Աստծո Մեսիայի (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄԵՄԻԱ) անձի և գործի շնորհիվ: Նոր հոգևոր արթնությունը տանում է դեպի Քրիստոսի նման ապրելակերպին, ծառայությանը, և վստահությանը:

Գ. Այն լավագույնս կարելի է հասկանալ որպես մի կողմից Սուրբ Հոգու հետ հոգևոր շարունակականություն, իսկ մարդկությունը որպես այս մոլորակի ֆիզիկական արարած, սակայն նաև մյուս կողմից Աստծո պատկերով հոգևոր արարած:

Դ. Պողոսը ՆԿ-ի հեղինակ է, ով զարգացնում է Հոգու/հոգու աստվածաբանությունը:

1. Պողոսը կիրառում է Հոգին հակադրելու մարմինը (այսինքն՝ մեղքի բնույթը)
2. Պողոսը կիրառում է հոգին հակադրելու ֆիզիկականը
3. Պողոսը կիրառում է Հոգին/հոգին հակադրելու միտքը, ճանաչողությունը, և էությունը

Ե. Մի քանի օրինակներ 1 Կորնթացիների թղթից՝

1. Սուրբ Հոգին , 1 Կորնթ. 12:3
2. Սուրբ Հոգու միջոցով Աստծո գորությունն ու իմաստությունը փոխանցվելիս, 1 Կորնթ. 2:4-5
3. Աստծո գործողությունները հավատացյալի մեջ՝  
ա. նոր մտածելակերպ, 1 Կորնթ. 2:12, 14:14,32  
բ. նոր տանար, 1 Կորնթ. 3:16, 6:19,20  
գ. նոր կյանք (այսինքն՝ բարոյականություն), 1 Կորնթ. 6:9-11  
դ. մկրտությամբ խորհրդանշվող նոր կյանքը, 1 Կորնթ. 12:13  
ե. Աստծո հետ մեկ դարձած (այսինքն՝ դարձը), 1 Կորնթ. 6:17  
զ. Աստծո իմաստությունը, ոչ թե աշխարհի իմաստությունը, 1 Կորնթ. 2:12-15, 14:14, 32,37  
է. ծառայության համար յուրաքանչյուր հավատացյալի հոգևոր պարզկներ ունենալը, 1 Կորնթացիների 12 և 14
4. հոգևորը ֆիզիկականի հետ հակադրության մեջ, 1 Կորնթ. 9:11, 10:3, 15:44
5. հոգևոր իշխանությունը հակադրության մեջ ֆիզիկական իշխանության, 1 Կորնթ. 2:11, 5:5, 7:34, 15:45, 16:18
6. մարդու ֆիզիկական մարմնից գատ նրա հոգևոր՝ ներքին կյանքը նկատի ունենալու կերպ, 1 Կորնթ. 7:34

Զ. Մարդիկ արարչագործությամբ ապրում են երկու տիրություններում (այսինքն՝ հոգևոր և ֆիզիկական): Մարդկությունը Աստծո հետ մտերմությունից ընկավ (Ծննդոց 3): Քրիստոսի կյանքի, ուսմունքների, մահվան, հարության և խոստացված վերադարձի

միջոցով, Հոգին հետապնդում է ընկած մարդկությանը գործադրելու ավետարանի հավատքը (այսինքն՝ Հովհ.6:44, 65), մինչև որ կվերականգնվեն Աստծո հետ փոխհարաբերության մեջ: Հոգին Երրորդության այն անձնական մասն է, որը բնութագրում է արդարության Նոր Դարաշրջանը: Հոգին Հայր Աստծո գործակալն է և Որդու Դատապաշտպանը այս «դարում» (ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԻՍՈՒՄԸ ԵՎ ՀՈԳԻՆ): Խնդիրը գոյություն ունի, քանի որ նոր դարաշրջանը ժամանակին է տեղի ունեցել, մինչդեռ հին մեղավոր ապստամբությունը դեռևս գոյություն ունի: Հոգին փոխակերպում է հինը նորի, նույնիսկ եթե նրանք երկուսն էլ գոյություն ունեն:

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՇՈՒՆՉ, ԶԱՄԻ, ՀՈԳԻ (ՀԿ)  
SPECIAL TOPIC: BREATH, WIND, SPIRIT (OT)**

Եբրայերեն *ruach* (BDB 924) տերմինը և հունարեն *pneuma* տերմինը կարող է նշանակել «հոգի», «շունչ» կամ «քամի» (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀՈԳԻՆ ԱՍՏՎԱԾԱՇՆՉՈՒՄ):

1. Հոգին հաճախ ասոցացվում է ստեղծագործության հետ (տես՝ Ծննդ. 1:2, Հոր 26:13, Սաղմոս 104:30): ՀԿ-ը հստակ չի սահմանում Աստծո և Նրա Հոգու միջև կապը: Սովորաբար «Հոգին» ոչ անձնական ուժ է, որը դուրս է գալիս ՅԱՀՎԵԻՑ կատարելու Իր նպատակները:
2. Հոր 28:26-28, Սաղմ. 104:24 և Առակ. 3:19, 8:22-23-ում Աստված գործածում է «իմաստություն» (BDB 315, ԻԳԱԿԱՆ ՍԵՌԻ ԳՈՅԱԿԱՆ, տես՝ Առակ. 8:12) ամեն բան ստեղծելու համար:
3. ՆԿ-ում ասվում է, որ Հիսուսը Աստծո գործակալն էր ստեղծագործության ժամանակ (տես՝ Հովհ. 1:1-3, 1 Կորնթ. 8:6, Կող. 1:15-17, Եբր. 1:2-3): Ինչպես փրկագործության մեջ, այնպես էլ ստեղծագործության մեջ, Աստվածության բոլոր երեք անձիք ներգրավված են: Ծննդոց 1-ն ինքնին չի շեշտադրում որևէ երկրորդ պատճառ (տես՝ Ես. 45:5-7):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀՈԳՈՒ ԱՆՉ ԼԻՆԵԼԸ

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄԵԿ ՊԱՏՃԱՌ

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 31:6-8**

- <sup>6</sup>Ատել եմ նրանց, որ ունայն կուռքերի են պատվում.  
Իսկ ես հույս դրի ՏԻՐՈՉ վրա,  
<sup>7</sup>Քո ողորմությամբ եմ ցնծալու և ուրախանալու,  
Քանի որ նկատեցիր իմ ծանր վիճակը  
Ու իմ անձի նեղությունն իմացար:  
<sup>8</sup>Ինձ չմատնեցիր թշնամուս ձեռքը,  
Այլ իմ ոտքերը մի լայնարձակ տեղում կանգնեցրիր:

**31:6-8** Այս պարբերության մեջ գերակշռում են ՎԱՂԱԿԱՏԱՐՆԵՐԸ, որոնք մատնանշում են ավարտված կամ կարգավորված վիճակ:

1. Ես ատում եմ նրանց, ովքեր ունայն կուռքերի են պատվում – BDB 971, KB 1338, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ: Սաղմոսերգուի ՅԱՀՎԵԻՆ խնդրանքներ ներկայացնելու ուժգնությունը այն հարցում, որ դատի, հիմնված է իր աշխարհայացքի վրա (այսինքն՝ աշխարհը դիտարկում է որպես ՅԱՀՎԵԻ գերծելատեղը): Նա ատում է նրանց, ովքեր խախտում կամ արհամարհում են ՅԱՀՎԵԻ ուխտը: LXX թարգմանությունը տալիս է «Դու ատում ես»:

2. Ես հույս դրի ՏԻՐՈՉ վրա – BDB 105, KB 120, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ: Սա պարբերաբար կրկնվող թեմա է, տես՝ Սաղմ. 4:5, 13:5, 25:2, 26:1, 28:7, 31:6,14, 52:8, 56:3,4,11, 91:2: Եթե «ՅԱՀՎԵԻ վախը գիտության սկիզբն է» (տես՝ Առակ. 1:7), ապա վստահությունը Նրան անձնապես ճանաչելու համար կարևոր է:
3. ՅԱՀՎԵՆ տեսնում է նրա ծանր վիճակը – BDB 906, KB 1157, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ (տես՝ Ելից 3:7-8):
4. ՅԱՀՎԵՆ գիտի նրա նեղությունը – BDB 393, KB 390, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՃԱՆԱԶԵԼ)
5. ՅԱՀՎԵՆ նրան չի մատնել իր թշնամիների ձեռքը – BDB 688, KB 742, *Hiphil* ՎԱՂԱԿԱՏԱՐ:
6. ՅԱՀՎԵՆ նրա ոտքերը լայնարձակ տեղում կանգնեցրեց – BDB 763, KB 840, *Hiphil* ՎԱՂԱԿԱՏԱՐ, տես՝ Սաղմ. 18:19, 118:5, լայնարձակ տեղը նեղ տեղի հակառակն է, որը նեղության դարձվածքն է (տես՝ Սաղմ. 4:1, 18:19, 118:5):

**31:7** Այս համարն ունի երկու *Qal* ԸՂՁԱԿԱՆ:

1. Ես ցնձալու եմ – BDB 162, KB 189
2. Ես ուրախանալու եմ – BDB 970, KB 1333



<b>NASB</b>	«բարեգթություն»
<b>NKJV, LXX</b>	«ողորմություն»
<b>NRSV</b>	«հաստատուն սեր»
<b>TEV</b>	«հարատև սեր»
<b>NJB</b>	«հավատարիմ սեր»
<b>REB</b>	«անմնացորդ սեր»
<b>JPSOA</b>	«հավատարմություն»

Բոլոր այս անգլերեն թարգմանությունները փորձում են արտահայտել ուխտի այս հզոր ԳՈՅԱԿԱՆԻ՝ *hesed*, էությունը: Այն ցույց է տալիս ՅԱՀՎԵԻ ուխտի անխախտ նվիրումը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԲԱՐԵԳԹՈՒԹՅՈՒՆ (HESED)

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 31:9-13**

<sup>9</sup>Ողորմի՛ր ինձ, ո՛վ ՏԵՐ, քանի որ ես նեղության մեջ եմ.  
Տրտմությունից մաշվեցին իմ աչքերը, իմ անձն ու որովայնը:  
<sup>10</sup>Քանի որ կյանքս՝ տխրությամբ ու տարիներս հառաչելով սպառովեցին.  
Ուժն իմ անիրավության պատճառով տկարացավ,  
Ոսկորներս էլ մաշվեցին:  
<sup>11</sup>Իմ բոլոր թշնամիների՝ մանավանդ դրացիներիս առջև նախատինք դարձա  
Եվ ծանոթներիս համար՝ ահ ու սարսափ.  
Դրսում ինձ տեսնողները հեռու էին փախչում ինձանից:  
<sup>12</sup>Մեռածի պես մոռացվեցի սրտերից,  
Կոտրված ամանի նմանվեցի:  
<sup>13</sup>Շատերի բամբասանքը լսեցի: Չորս կողմս վախ կար.  
Իրար մոտ հավաքվելիս իմ մասին էին խոսակցում, որ կյանքս խլեն:

**31:9-13** Այս պարբերությունը օգտագործում է մարդու մարմնի մասեր, որպեսզի արտահայտի սաղմոսերգուի նեղությունը (BDB 865 II):

1. աչք (BDB 744), Սաղմ. 31:9, տես՝ Սաղմ. 6:7, 38:10
2. անձ (BDB 659), Սաղմ. 31:9 (այսինքն՝ *nephesh*, տես՝ Սաղմ. 3:2 և Ծննդ. 35:18-ի գրառումները)
3. որովայն (BDB 105), Saxm.31:9,10
4. մարմին (բառացի՝ «ոսկորներ», BDB 782), Saxm.31:10

Նեղությունը (մեղքի պես, տես՝ Սաղմ. 31:10գ, Սաղմոս 32, 51) հանգեցնում է ֆիզիկական դրսևորումների:

1. վիշտ
2. հառաչանք
3. գորության՝ ուժի անկում
4. ոսկորների մաշում (ԲԱՅ, BDB 799, KB 898, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ, այս համատեքստում կիրառված է երկու անգամ՝ Սաղմ. 31:9 և 10 և միայն մեկ ուրիշ անգամ էլ ՀԿ—ում՝ Սաղմ. 6:7):

Ժամանակակից բժշկությունը ավելի ու ավելի է հասկանում մտքի և մարմնի միջև կապը: Դրանք մի ամբողջություն են (տես՝ Սաղմ. 31:12):

**31:11** Չրպարտությունը և նեղությունը, որոնք ունեցել են այդպիսի ֆիզիկական հետևանքներ, նաև հանգեցնում են սոցիալական հետևանքների:

1. Ես նախատինք եմ դարձել՝ մանավանդ դրացիներին առջև:
2. Ես ահ ու սարսափի առարկա եմ դարձել ծանոթներին համար:
3. Մարդիկ փախնում են ինձնից
4. Ես մոռացված եմ (մտքից դուրս) մեռածի պես

**31:13** Այս համարը նկարագրում է իր թշնամիների գործողությունները:

1. նրանք չարախոսում են նրան (այսինքն՝ նրանց սուտ խոսքերը հաջորդող տողում են, «չորս կողմս վախ կար»)
2. նրանք խորհուրդ են անում նրա դեմ
3. նրանք ծրագրում էին (BDB 273, տես՝ Սաղմ. 37:12) նրան կյանքից զրկելու (զուգահեռ է #2-ին)

Այս գործողությունների լույսի ներքո Սաղմ. 31:9-ի «ողորմի՛ր ինձ, ո՛վ ՏԵՐ» ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ հասկանալի է:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. ՍԱՂՄՈՍ 31:14-18**

- <sup>14</sup>Բայց ես Քեզ վստահեցի, ո՛վ ՏԵՐԸ,  
Ասացի. «Դո՛ւ ես իմ Աստվածը»:  
<sup>15</sup>Իմ ժամանակները Քո ձեռքին են .  
«Փրկի՛ր ինձ իմ թշնամիների ձեռքից ու ինձ հալածողներից:  
<sup>16</sup>Փայլեցրո՛ւ երեսդ ծառայիդ վրա,  
Հանուն Քո ողորմության ինձ փրկիր:  
<sup>17</sup>Թող չամաչեմ, ո՛վ ՏԵՐ, քանի որ Քեզ եմ կանչել .  
Ամբարիշտները թո՛ղ ամաչեն ու գերեզմանում թող լո՛ւռ մնան:  
<sup>18</sup>Թող պապանձվեն ստախոս շուրթերը,  
Որոնք հպարտությամբ ու արհամարհանքով  
Չարախոսում են արդարի դեմ:

**31:14-18** Այս պարբերությունն ունի բազմաթիվ ազդեցիկ աղոթքի խնդրանքներ, որոնք հիմնված են՝

1. սաղմոսերգուի կողմից ՅԱՀՎԵԻ վստահության վրա (*Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ, տես՝ Սաղմ. 31:6), Սաղմ. 31:14
  2. ՅԱՀՎԵՆ իր Աստվածն է՝ Սաղմ. 31:14
  3. իր կյանքը ՅԱՀՎԵԻ ձեռքերում է՝ Սաղմ. 31:15
- Ահա խնդրանքները՝
1. փրկիր ինձ – BDB 664, KB 717, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ Սաղմ. 7:2, 18:17, 22:20, 31:2, 39:8, 51:14, 59:1, 69:14, 109:21, 119:170, 120:2, 142:6, 143:9, 144:7,11, սա հավատարիմ հետևորդի սրտի կանչն է՝ այս ընկած աշխարհում կյանքի հոգևոր, մտավոր և ֆիզիկական ոլորտներում ազատության համար:
  2. փայլեցրո՛ւ երեսդ ծառայիդ վրա – BDB 21, KB 24, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ ԹՎոց 6:25-26, Սաղմ. 4:6, 67:1, 80:3, 7, 19, 119:135



3. հանուն Քո ողորմության ինձ փրկիր – BDB 446, KB 448, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, Սաղմոսներում բազմաթիվ անգամներ
4. թող չամաչեն – BDB 101, KB 116, *Qal* ԸՂՁԱԿԱՆ
5. ամբարիշտները թող ամաչեն – BDB 101, KB 116, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով
6. գերեզմանում թող լուռ մնան – BDB 198, KB 226, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով
7. թող պապանձվեն ստախոս շուրթերը – BDB 47, KB 57, *Niphal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով

**31:15 «Իմ ժամանակները Քո ձեռքերում են»** Հավատարիմ հետևորդները հավատում են, որ ժամանակը և հավիտենությունը Աստծո կանխագիտության և հսկողության ներքո են: Ոչինչ չի զարմացնում Նրան (տես՝ Հոր 14:5, 16, 28:24, 31:4, 34:21, Սաղմ. 139:1-16, հատկապես՝ Սաղմ. 31:16):

**31:17** Նկատեք հակադրությունը՝

1. սաղմոսերգուն խոսում է Աստծո հետ
2. ամբարիշտները լուռ են (այսինքն՝ մեռած) կամ խոսելիս խոսում են ամբարտապանորեն՝ հպարտության և արհամարհանքով:
3. նույնը ինչ #2

Դուք կարող եք ճանաչել մարդկանց իրենք խոսքերով (տես՝ Մատթ. 12:35-37): Լեզուն հայտնում է սիրտը:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 31:19-22**

<sup>19</sup>Որքա՛ն մեծ է Քո բարությունը,  
 Որ պահում ես Քեզանից երկյուղ ունեցողների համար,  
 Ու շնորհում ես նրանց, ովքեր իրենց հույսը դրել են Քեզ վրա  
 Մարդկանց որդիների առջև:  
<sup>20</sup>Նրանց Քո ներկայության գաղտնարանում ես պահելու  
 Մարդու հպարտությունից,  
 Լեզուների հակառակությունից Քո վրանում ես թաքցնելու նրանց:  
<sup>21</sup>Օրհնյա՛լ լինի ՏԵՐԸ,  
 Քանի որ Իր հիասքանչ բարությունը ցույց տվեց ինձ ամուր քաղաքում:  
<sup>22</sup>Իսկ ես իմ շփոթմունքի մեջ ասացի,  
 Թե՛ «Ես կտրված եմ Քո աչքի առջևից»,  
 Սակայն Դու լսեցիր իմ աղերսանքի ձայնը,  
 Երբ Քեզ աղաղակեցի:

**31:19-22** Այս պարբերությունը նկարագրում է ՅԱՀՎԵԻ «բարությունը» (BDB 375, տես՝ Սաղմ. 145:7): Հավանաբար այս պարբերությունը պետք է հասկանալ ՅԱՀՎԵԻ կողմից սաղմոսերգուի աղոթքի խնդրանքները պատասխանելուց հետո, այն խնդրանքները որոնք գրված էին սաղմոսի սկզբնամասում:

1. պահված է ՅԱՀՎԵԻՑ երկյուղ ունեցողների համար
2. այն մարդկանց համար է, ովքեր ապավինում են ՅԱՀՎԵԻՆ
3. ՅԱՀՎԵՆ թաքցնում է Իր ժողովրդին՝  
 ա. Իր ներկայության գաղտնարանում  
 բ. Իր թաքստոցում՝ վրանում
4. ՅԱՀՎԵՆ իր բարեգթությունը հիասքանչ կերպով հայտնել է սաղմոսերգուին
5. ՅԱՀՎԵՆ լսեց նրա խնդրանքները:

**31:19 «մարդկանց որդիների առջև»** ՅԱՀՎԵՆ ոչ միայն պաշտպանում է, այլ նաև ընդունում է Իր հետ մեր ունեցած հատուկ փոխհարաբերությունը մեր թշնամիների առջև (տես՝ Սաղմ. 23:5):

**31:20** Գաղտնարանը տաճարի/խորանի ներքին (կամ հետին) սրբարանն էր (տես՝ Սաղմ. 27:5): Սա մի հատուկ վայր էր, որտեղ ՅԱՀՎԵԻ անձնական ներկայությունն էր հայտնվում (այսինքն՝ ուխտի տապանակը):

**31:21 «ամուր քաղաքում»** Չնայած որ մենք չգիտենք Սաղմոսների պատմական միջավայրը, այս արտահայտությունը կարծես թե փոխաբերական իմաստով է: Այն նկարագրում է մի անձի, որը զգում է իրեն շրջապատված ամբարիշտ, չար, ստախոս մարդկանցով:

Չնայած որ սաղմոսերգուն մենակ է զգում, նա հավատում է, որ ՅԱՀՎԵՆ լսում է և կգործի իր համար՝ իր օգտին:

UBS Տեքստային Չեռնարկը (էջ՝ 213) տալիս է այս խոսքին «A» գնահատական՝ հակադրված NEB թարգմանության մեջ «նեղության միջով» խոսքի:

JPSOA տարբերակը այս արտահայտությունը թարգմանում է որպես թե այն բնութագրում է, թե ինչու պետք է ՅԱՀՎԵՆ «օրհնյալ» լինի՝ Սաղմ. 31:21ա: Նա հզոր է և անփոփոխ (այսինքն՝ «իսկական ամրոց»): Հրեական Սերտողության Աստվածաշնչի լուսանցքում սա կապված է ՅԱՀՎԵԻ հետ, որպես «գործության վեմ», «ամրություն», «ժայռ» (այսինքն՝ «վեմ»), և «ամրոց» Սաղմ. 31:2-3 – ում (էջ՝ 1316):

**31:22 «Ես կտրված եմ Քո աչքի առջևից»** Հրեական Սերտողության Աստվածաշունչը (էջ՝ 1316) մեկնաբանում է այս արտահայտությունը որպես «տաճարից բացակա» նշանակությամբ (այսինքն՝ 2 Մնաց. 26:21, որտեղ նույն արտահայտությունը կիրառվում է Ոգիայի համար, որն իբրև բորոտ, ի գորու չէր մտնել տաճար): Այս ԲԱՅԻ *Niphal* ձևը (BDB 173, KB 202) ՀԿ-ում գտնվում է միայն այստեղ:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 31:23-24**  
**<sup>23</sup>Օ՛, սիրեցե՛ք ՏԻՐՈՉԸ, ո՛վ Նրա բոլոր սրբեր,  
ՏԵՐԸ պահպանում է հավատարիմին,  
Իսկ ամբարտավաններին լրիվ հատուցում է:  
<sup>24</sup>Քա՛ջ եղե՛ք, ու Նա կգորացնի ձեր սրտերը,  
Դուք՝ բոլորդ, որ ՏԻՐՈՉ վրա եք հույս դրել:**

**31:23-24** Ինչպես որ շատ հաճախ Սաղմոսներում է լինում, վերջին պարբերությունը՝  
1. զգուշացում է  
2. հորդոր  
3. միասնական աղոթք  
Այստեղ նույնպես #2-ն է: Երկու համարների առաջին ԲԱՅԵՐԸ ՀՈԳՆԱԿԻ ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐ են:  
1. սիրեցե՛ք ՏԻՐՈՉԸ – BDB 12, KB 17, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, սովորաբար այս ԲԱՅԸ վերաբերում է ՅԱՀՎԵԻ սիրույն կամ ԵԶԱԿԻ դեպքում՝ սաղմոսերգուի սիրույն:  
2. քա՛ջ եղե՛ք – BDB 304, KB 302, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, որին հետևում է հոմանիշ, BDB 54, KB 5, *Hiphil* ՀԱՅՑԱԿԱՆ (եբրայական զուգահեռականությունը):

**31:23 «Նրա հավատարիմները»** Սա վերաբերում է հավատարիմ հետևորդներին (տես՝ Սաղմ. 30:4, 37:28, 50:5), ոչ թե հրեշտակներին (տես՝ Սաղմ. 29:1):

- ❖ Սրանք կյանքի փորձառություններ են (կամ հանդերձյալ կյանքի՝
  1. հավատարիմների – BDB 52 I
  2. ամբարտավանների – BDB 793 I, KB 889, *Qal* ԴԵՐԲԱՅԱԿԱՆ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ BDB 144՝ հակադրված են՝
    1. պահպանում է – BDB 665, KB 718, *Qal* ԴԵՐԲԱՅ
    2. հատուցում է – BDB 1022, KB 1521, *Piel* ԴԵՐԲԱՅ

**31:24** Ինչպիսի՛ սքանչելի մխիթարություն է բոլոր հավատարիմ հետևորդների համար (տես՝ Սաղմ. 27:14, 37:34, 62:5, 130:5, Ես. 25:9):

## **ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ**

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ինչո՞ւ է սաղմոսերգուն այդքան մեծ նեղության մեջ:
2. Թվարկե՛ք մեղքի ֆիզիկական և սոցիալական հետևանքները:
3. Բացատրե՛ք «ամոթ խոսքը ՀԿ-յան համատեքստում»:
4. Արդյո՞ք Սաղմ. 31:21-ը բառացի է, թե փոխաբերություն է:
5. Ինչո՞ւ են բազմաթիվ Սաղմոսներ, որոնք գրված են անհատի կողմից, ավարտվում հավաքական իմաստով: